

Ի Ր Ա Ց Ի Ի

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԵՎ ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

1948 թ մայիս 22-ին Թբիլիսիում բացվեց Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների Բաժանմունքների միացյալ գիտական սեսիան, նվիրված հայ և վրաց ժողովուրդների պատմության և հայ-վրացական ֆիլոլոգիայի հարցերին:

Սեսիայի աշխատանքները մայիսի 22—25-ը ընթացան Վրաստանի մայրաքաղաքում, և մայիսի 27—30-ը՝ Երևանում: Սեսիայի չորս պլենար և 6 սեկցիոն նիստերում լսվեց 25 գիտական զեկուցում:

Մայիսի 22-ի երեկոյան բաց անելով սեսիայի պլենար նիստը, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ և հասարակական գիտությունների Բաժանմունքի նախագահ Ա. Շանիձեն նշեց Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունն ու գործակցությունը, այդ ժողովուրդների պատմության և կուլտուրայի սերտ կապը իրար հետ: Անդրկովկասի ժողովուրդների պատմության և կուլտուրայի շատ և շատ հարցեր առավել ամբողջական, խորը դիտական և ճիշտ լուսաբանություն կարող են ստանալ վրացական, հայկական և ադրբեջանական գիտնականների միացյալ ջանքերով և սերտ գործակցության շնորհիվ:

Մինչև սովետական կարգերի հաստատվելն Անդրկովկասում, մի շարք առաջավոր գիտնականներ՝ ակադեմիկոս Նիկոլայ Մառի գլխավորությամբ պայքարում էին վրացի և հայ գիտնականների սերտ համագործակցություն ստեղծելու համար, սակայն նման փորձերը անհաջողանքների խոչընդոտների էին հանդիպում և ձախողվում էին: Միայն սովետական կարգերում էր, որ ստեղծվեցին Անդրկովկասի գիտնականների սերտ և մշտական համագործակցության բոլոր նախադրյալները:

Ա. Շանիձեի բացման խոսքից հետո պլենար նիստը լսեց ավագ գիտական աշխատակից Ա. Կիկվիձեի զեկուցումը Անդրկովկա-

սյան ֆեդերացիայի ստեղծման և ադրբեջանական, հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում նրա խաղացած դերի մասին:

Զեկուցողը նշեց, որ Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծմանը նախորդեց Անդրկովկասի աշխատավորության համախմբման և ինտերնացիոնալիստական միասնության համար աեղի ունեցած մի համառ պայքար, որ մղում էին Անդրկովկասի բուլշևիկները ընկեր Սաալիսի և նրա մերձավոր գործակիցներ Օրջոնիկիձեի, Շահումյանի, Սպանդարյանի, Ագիզբեկովի գլխավորությամբ:

Համառ պայքար մղելով բուրժուական նացիոնալիզմի դեմ, բուլշևիկները ստեղծեցին Անդրկովկասի աշխատավորության ինտերնացիոնալիստական տրադիցիաները և կոֆեցին նրանց միասնությունը: Ըստ իր ցայտուն արտահայտությունը գտավ ՌՍԴԲԳ Կովկասյան Միության կազմակերպման, 1905—1907 թ.թ. ռեոլուցիայի ժամանակ բուրժուական փոխադրական դասակարգի և ցարիզմի դեմ զինված ելույթների ու համառ պայքարի մեջ:

Բաքվի պրոլետարիատը հանդիսացավ ռեոլուցիոն շարժման ավանգարդը, նա վճռական դեր խաղաց ռուսական առաջին ռեոլուցիային հետևած ռեակցիայի, և ժողովուրդների բարեկամության յիսերիմ թշնամիների՝ ռուսական ցարիզմի և բուրժուական նացիոնալիստների դեմ մղված պայքարում:

Սոցիալիստական մեծ ռեոլուցիան Անդրկովկասում համեմատաբար ուշ հաղթանակ տարավ: Մինչև Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական կարգեր հաստատվելը, այս երկրներում բուրժուանացիոնալիստական պարտիաները՝ մենշևիկները, դաշնակները, մուսավաթականները ստեղծեցին հակառեոլուցիոն կառավարություններ: Արևմտաեվրոպական իմպերիալիզմի այդ վարձկան ագենտները ջանում էին անջատել Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից,

դարձրին այն ազգամիջյան եղբայրասպան պատերազմների բուն և կործանման դուռը հացքին հայաստանը, Վրաստանը և Ադրբեյջանը:

Սովետական իշխանությունը փրկեց Անդրկովկասը հակառակուսեցիոն պարտիաների կործանիչ ախրապետությունից և իմպերիալիզմի հերաններից: Վերականգնվեց բարեկամությունը Անդրկովկասի ժողովուրդների միջև, Այս տեսակետից հոկայական նշանակություն ունեցավ ընկ. Սաալիսի գեկուցումը Թբիլիսիի պարտիական ակտիվի նյութում 1921 թ. հունիսի 8-ին:

Անդրկովկասի քայքայված տնտեսության արագ վերականգնման և երեք եղբայրակից սովետական ռեսպուբլիկաների տնտեսական, բաղադրական և կուլտուրական ամրապնդման ու բարգավաճման շահերը պահանջում էին այդ երեք ռեսպուբլիկաները միավորել ֆեդերացիայի մեջ: Լենինի և Ստալինի ուղղակի ցուցումներով և ադրբեյջանական, վրաց ու հայ ժողովուրդների միահամուռ կամքով՝ 1922 թ. մարտի 12-ին ստեղծվեց Անդրկովկասյան ֆեդերացիա:

Անդրկովկասյան ֆեդերացիան հսկայական պատմական դեր խաղաց Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ամրապնդման, երկրի անասական վերականգման, ինդուստրիալիզացիայի և սոցիալիստական հասարակության ֆունդամենտի կառուցման, գյուղատնտեսության կոլեկտիվացման և երկրի կուլտուրական բարգավաճման բնագավառներում:

Անդրկովկասյան ֆեդերացիան ընկ. Բերիայի գլխավորությամբ անեցրեց և ամրապնդեց Անդրկովկասի ժողովուրդների սոցիալիստական պետականությունը և հնարավոր դարձրեց Ադրբեյջանի, Վրաստանի և Հայաստանի ինքնուրույն պետական գոյությունը, որպես միութենական ռեսպուբլիկաներ:

Փայլուն կերպով կատարելով իր պատմական դերը, Անդրկովկասյան ֆեդերացիան Ստալինյան կոնստիտուցիայով վերացվեց: Ադրբեյջանի, Վրաստանի և Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաները ՍՍՌ Միության կազմի մեջ մտան որպես ինքնուրույն պետություններ:

Առաջին պլենար նիստում հանդիս եկավ նաև Հայկական ՍՍՌ ԴԱ իսկական անդամ Գ. Ղափանցյանը, որը ղեկուցում կարգաց «Սուֆիկսները և սուֆիկսացած էլեմենտները հին Փոքր Ասիայի և հարևան երկրների տեղանունների մեջ» թեմայով:

Զեկուցողը լայն կերպով օգտագործելով իսթական սեպագիր և հիերոգլիֆ արձանագրությունների խորհրդանշան, ուրաբա-

կսն, ասորա-բարելոնական սեպագրությունների տվյալները, ինչպես և հայկական ու վրացական նյութերը, քննության տալով լեզվաստեղծական մի քանի օրինաչափություններ տեղանունների առաջացման բնագավառում, կապված մարդկային մտածողության հնագույն ստադիաների հետ: Նման օրինաչափություններից մեկն այն է, երբ առարկաների կամ անձանց հոգնակի թիվը արտահայտում է նաև տեղանուն (օրինակ Թեղիք, Ռչտունիք, Կուզարք, Հայք և այլն): Մտածողության հնագույն աստիճանում հոգնակացուցիչ մասնիկը արտահայտում է էթնիկ անունը և տեղանունը, հետագայում էթնիկ անունների, անձնավորությունների և տեղանունների տարբերությունները դրսևորվում են տարբեր սուֆիկսներով և տարբեր սուֆիկսացած էլեմենտներով: Որպես լեզվամտածական օրինաչափ երևույթ տեղանունները կազմվում էին կամ ստացական (պոսեսիվ) մասնիկներով, կամ անվան ֆունկցիայով՝ սեռական հոլովում, հաճախ տեղականացնող հատուկ վերջավորությամբ, երբ առարկայանում են ածական պատկանելիությունները և այլն:

Զեկուցողը լուսաբանեց նաև տեղանունների բառակազմական պրակտիկայի առանձնություններն ու տարբերություններն ըստ ձևական արտահայտության, ցույց տալով նրանց պատմական կոնկրետացումը և կազմավորումը, որի հետ կապվում է հին Փոքր Ասիայի լեզվական և էթնիկ միավորների լուրիագացիան ու տարածումը, տվյալ լեզվի այս կամ այն սուֆիկսի տարածվածությունն ու կենսունակությունը տվյալ ժամանակամիջոցում: Ահա այս տեսանկյունով ղեկուցողը քննության առավ մի շարք սուֆիկսների և սուֆիկսացած էլեմենտների ծագումը, լեզվական պատկանելիությունը, աշխարհագրական և էթնիկ տարածումը, կապված հայկական և վրացական տեղանունների հետ:

Զեկուցման առթիվ ելույթ ունեցավ Վրացական ՍՍՌ ԴԱ վիցե-պրեզիդենտ Ա. Շանիձեն, որը խոսելով ղեկուցման գիտական մեծ արժեքի մասին միաժամանակ նշեց, որ վրացական տեղանուններից բերված օրինակներից մի քանիսը ստուգման և շտկման կարիք ունեն:

Առաջին պլենար նիստում հանդես եկավ նաև Վրացական ՍՍՌ ԴԱ իսկական անդամ Բանաստեղծ Գրիշաշվիլին, որը ղեկուցում կարգաց «Բարեկամության գաղափարը վրաց և հայ գեղարվեստական գրականության մեջ» թեմայով: Զեկուցողը ցույց տվեց, որ հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը իր սրտագին և հրաշալի արտահայ-

առաջինն է դառնում և՛ բանաստեղծական խոսքի մեջ, և՛ արձակ գրականության, և՛ դրամայի մեջ։ Առանձնապես շեշտվեց թե բարեկամության որպիսի ուժեղ մթնոլորտ են ստեղծել Սայաթ-Նովայի, Գ. Սունդուկյանի և Հ. Թումանյանի ստեղծագործությունները։

Մայիսի 23-ի կիրակի օրը սեփայլ մասնակիցներն այցելեցին ընկ. Սաալիյի առևթանդարանը Գորիում և ծանոթացան վրացական ճարտարապետական նշանավոր հուշարձանների հետ Սամթավիում և Մցխեթում։

Մայիսի 24-ի առավոտյան պատմության սեկցիայի նիստում Հայկական ՍՍԻ ԳԱ Պատմության Ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից Ս. Սրեմյանն իր զեկուցման մեջ բնութագրեց Հայաստանի հասարակական կառուցվածքի հիմնական գծերը հելենիստական էպոխայում (II—I դ. դ. մ. թ. առաջ)։

Ձեկուցողը ցույց տվեց, որ II—I դ. դ. Հայաստանի հասարակական կառուցվածքի հիմնական գծերն էին՝ 1) գյուղական համայնքն, ըստ երգերի կառավարող հողաբաժանության սխեմայով կրկնություններով, 2) մասնավոր սեփականատիրական տնտեսությունը, երբ բավականին տարածված երեկոյթ էր լատիֆունդիանտությունը, մասնավոր Հայաստանի կենտրոնական գավառներում, առհարակա հողատիրությունը (Հայաստանի հեթանոսական առհարները ընդարձակ հողային տիրություններ ունեին)։ Հողերի անօրինման գերագույն իրավունքը պատկանում էր թագավորին, որն օգտագործելով այդ իրավունքը, կալվածներ էր պարգևում պետական պաշտոնյաներին այդ մասնակ առդեն ձևավորվող գործակալական պաշտոնների համար, ինչպես և ռազմիկներին, որով առաջ է գալիս մի կողմից պայսանական կալվածատիրությունը, մյուս կողմից ռազմիկ հողատերերի դասը (կենտրոններ)։ 3) Առաջ են գալիս հելենիստական տիրապետության մոնոպոլիան։ Բավականաչափ ուժեղանում է դրամական շրջանառությունը, հայ թագավորները կարում են հելենիստական տիրապետության, արծաթե և բրոնզե դրամներ։

Նյութական բարիքների հիմնական առաջընթացը հանդիսանում է գյուղական համայնքի անդամ ազատ գյուղացին, սակայն խոշոր չափերով կիրավում է նաև սարկական աշխատանքը լատիֆունդիաններում, առհարական կալվածներում, պետական շինարարու-

թյան մեջ (բերդեր, ճանապարհներ և այլն) հանքերում և պետական մոնոպոլիա հանդիսացող արհեստանոցներում։

Նման հատկանիշներ ունեցող հասարակությունը զեկուցողն համարում է արևելյան հելենիստական տիրապետության հատկանիշներ։

Ձեկուցման առթիվ ելույթ ունեցան Ա. Շանիձեն, որը մասնանշեց հայկական հնագույն գրավոր աղբյուրների և նրանց մեջ հանդիպող տերմինների առավել զգուշավոր օգտագործման անհրաժեշտությունը և Անշարաձեն, որը հիշեցրեց պրոֆ. Յուզկովի եսկադ. Գրեկովի առաջ քաշած տեսակետը, ըստ որի Հայաստանը II—I դարերում ներկայացնում էր անցողիկ տիրապետության պետություն՝ երեք տնտեսական կացութաձևերով (գյուղական համայնք, ստրկատիրական և ֆեոդալական կացութաձևեր), նշելով որ ֆեոդալիզացիան Հայաստանում ավելի վաղ է սկսվում, քան տրեմուրում։

Վրացական ՍՍԻ ԳԱ իսկական անդամ Ն. Բերձենիշվիլին բարձր գնահատեց զեկուցման նշանակությունը և՛ հայ և՛ վրաց պատմության համար։ Նա միաժամանակ նշեց թե պետք է ավելի զգուշավոր կերպով օգտագործել հայ հին մատենագրության մեջ թարգմանաբար բերվող տերմինները և թե ինքը չի համաձայնում Յուզկովի և Գրեկովի տեսություն հետադարձության տիրապետության և երեք կացութաձևերի գոյության հարցում, գանելով, որ այդ կացութաձևերից մեկն ու մեկը գերակշռում էր։ Առայժմ այդ բանը չգիտենալը մեզ իրավունք չի տալիս հակառակը պնդել։

Դեկարրիտաները և Վրաստանը՝ զեկուցմամբ Վրացական ՍՍԻ ԳԱ Պատմության Ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից Ն. Մախարաձեն հերքեց այն պնդումը թե «Գովկառը [դեկարրիտանների] գավառությունը մասնակից չի եղել»։ Ռուսաստանի և Վրաստանի առաջադեմ գործիչների միջև կապը ստեղծվել է Վրաստանը Ռուսաստանին միակցվելու մոմենտից սկսած։ Դեկարրիտաներ Վրաստանում իղել են դեկտեմբերյան ելույթից առաջ էլ և փորձեր են կատարել հիմնելու դադանի ընկերություններ։ Դեկտեմբերի 14-ից հետո Գովկառ արտորվեցին բազմաթիվ աչքի ընկնող դեկարրիտաններ, որոնք իրար հետ համագործակցություն էին ստեղծել և սերտ կապեր էին պնդում ալ վայրեր աքսորված դեկարրիտանների հետ։ Երևանի պաշարման մասնակ 1827 թ. դեկտրիտանները խրամատներում հավաք կազմակերպեցին։ Ձեկուցողի կարծիքով դեկարրիտանները գրական վերաբերմունք էին ցուցաբերում լեհաստանի, լիտ-

վայի ինչպես և Վրաստանի անկախության վերականգնման հարցում:

Վրաստանի առաջավոր գործիչները կապված էին զեկարրիստների հետ, այս տեսակետից աչքի ընկնող դեր էր խաղում Ալ. Ճավհավաձեն:

Զեկուցողն անկասկածելի է համարում զեկարրիստների ազդեցությունը 1832 թ. Վրաստանը Ռուսաստանից անջատելու նպատակով կազմակերպված դավադրության մասնակիցների վրա: Զեկուցողը պնդում է թե 1832 թ. չորսուր միասարը չէր, նրա մեջ կար և հետագիւմ ազնվականական թեր և առաջադիմական գործիչների թիւը:

Զեկուցման առթիվ ելույթ ունեցողները նշեցին զեկուցման արժանիքները և թերությունները: Վրացական ՍՍԻ ԳԱ իսկական անդամ Պապուրիձեի կարծիքով Վրաստանում զեկարրիստական դադարի ընկերության գոյությունը փաստերով հիմնավորված չէ, զեկարրիստների պաշտոնական ծրագրում («Русская Правда») միայն Լեհաստանի անկախության իրավունքն է ճանաչվում: Հայկական ՍՍԻ ԳԱ Պատմության Ինստիտուտի ավագ դիտ. աշխատակից Ն. Աղայանը գտնում է, որ հակասություն կա զեկարրիստական շարժման ու 1832 թ. դավադրության միջև և զեկարրիստների ու վրացական գործիչների կապերի հարցը զեկուցողը հիմնավոր կերպով չի ապացուցում: Հայկական ՍՍԻ ԳԱ Դրականության Ինստիտուտի ավագ դիտ. աշխատակից Ս. Հարությունյանը գտնում է, որ տվյալ հարցի պարզաբանման համար անհրաժեշտ է օգտագործել նաև զեկարրիստների զեղարկատական ստեղծագործությունները ինչպես և պարզել զեկարրիստների իդեալական կապը Անդրկովկասի ժողովուրդների գրականության հետ: Վ. Դոնիձեն գտնում է թե զեկարրիստների և վրաց առաջավոր գործիչների կապը զեկուցման մեջ ապացուցված է, իսկ «Русская Правда»-ն ազդային հարցում միայն Պետտելի անձնական տեսակետն է արտահայտում:

Մայիսի 24-ին առավոտյան նիստից հետո սեսիայի մասնակիցները այցելեցին Անդրկովկասյան մետաղագործական գործարանը և այնտեղ կառուցվող նոր՝ Ռուսթավի քաղաքը:

Պրեկոյան տեղի ունեցավ բանախորական սեկցիայի նիստը: Սայաթ-Նովայի կյանքին ու գործունեությանը նվիրված զեկուցումով հանգես եկավ Հայկական ՍՍԻ ԳԱ Պատմության Ինստիտուտի ավագ դիտ. աշխատակից Ս. Հասրաթյանը: Զեկուցողը նշեց Սայաթ-Նովայի բացառիկ դերը, փորձեց ապացուցել,

որ Սայաթ-Նովան ծնվել է 1717 թ., կրթությունն ստացել է վանքում (հավանաբար Սանահինում), տիրուպետել է գրաբար, վրացերեն, պարսկերեն գրական լեզուներին ինչպես և հայերեն, վրացերեն, աղբյուրներեն, թուրքերեն խոսակցական լեզուներին, սակայն զերադասել է գրել ժողովրդի խոսակցական լեզվով: Սայաթ-Նովայի գրական գործունեությունը սկսվել է 20 տարեկան հասակից, սկզբում մի քանի տարի նա գրել է միայն աղբյուրներեն, ապա նաև վրացերեն, իսկ 30 տարեկան հասակից գրել է նաև հայերեն, հետագայում բոլոր լեզուներով հավասարապես: Սայաթ-Նովայի գրական գործունեությունը տևել է ոչ ավելի քան 23 տարի, նրա ստեղծագործության ամենաբուռն շրջանը ընկնում է 1747—1759 թ. թ. լինելով վրաց Հերակլ II թագավորի փառալուծական պատերազմի ժամանակ: Սայաթ-Նովան ծնունդով վրաց Հերակլ II թագավորի փառալուծական պատերազմի ժամանակ, անկեղծ հպարտությամբ համարելով իրեն ժողովրդի ծառան, արտահայտելով նրա իդեալները: Սայաթ-Նովան առաջին հերթին հանդիսանում է ոչ թե ճորտ գյուղացիության, այլ իր էսոթիայի քաղաքային ստորին խավերի տնտեսական և քաղաքական շահերի արտահայտիչը: Նրա ստեղծագործությունը ակտիվ քաղաքական բնույթ չի կրում և այդ ինքնատուությունը բացառում է 1730—50-ական թ. թ. Անդրկովկասի և առաջին հերթին Քրիլիսիի քաղաքային ստորին խավերի քաղաքական ինքնատուությամբ Սայաթ-Նովայի ստեղծագործությունը յուրահատուկ հումանիտական բնույթ ունի և պատկանում է Անդրկովկասի երեք եղբայրակից ժողովուրդներին, նշանավորելով նրանց բարեկամությունը և որպես այդպիսին փայլուն բնություն է քննել ժամանակի առջև պահանջելով իր անմահ թարմությունը:

Վրացական ՍՍԻ ԳԱ թղթակից անդամ Բարամիձեն չի համաձայնում զեկուցողի այն եզրակացության հետ, թե Սայաթ-Նովան 1760 թ. հետո բանաստեղծություններ չի գրել, օրինակ լին վրաց թագավորի բանաստեղծն և երգիչն եմ: Բանաստեղծությունը գրված է ոչ թե 1760, այլ 1763 թվին: Վրացական ՍՍԻ ԳԱ իսկական անդամ Կեկելիձեն նշեց՝ Սայաթ-Նովայի ծննդյան տարեթիվը բավականաչափ չհիմնավորվեց, մասկան տարեթիվ հարցը բաց մնաց, չհիմնավորվեց և այն հարցը, թե երբ է դադարել գրելուց Սայաթ-Նովան:

Հայկական ՍՍԻ ԳԱ իսկական անդամ Հ. Աճառյանը հաղորդեց իր ուսումնասիրությունների արդյունքները հայկական «Հ» հրատարակչության «Հ»-ի փոխվելու ժամանակի և հան-

զամանքների վերաբերյալ: Վճահայտները պարունակող Բաղդատ, Բուդա անունների և այլ բառերի գործածությունը պատմական անհրաժեշտությամբ 9-րդ դարի ձեռներին Վճահայտները փոխվեց Վճ. ի և այդպես արտասանվում էր մինչև 11-րդ դարը ներառյալ: Զեկուցողի այս եղբայրությունները հիմնավորվեցին բաղաժիվ փաստերով:

Զեկուցման առթիվ ելույթ ունեցող Ա Շա. նիձեն նշեց Ն. Անտոյանի մեծ ծառայությունները հայագիտության համար, հիմնավորված համարեց զեկուցողի եղբայրացությունները և հայանեց այն կարծիքը, որ 11-րդ դարի բարձրագույն միաժամանակ չի փոխվել Վճ. ի, այլ նախ՝ բարձրագույնից մեկում, ապա անցել է մյուսներին: Այս հանգամանքը զեկուցման մեջ պարզաբանված չէ: Վրացական ՍՍԽ ԳԱ իսկական անգամ Գ. Ախվիզիանին զեկուցումը համարեց որինակելի:

Բանասիրական սեկցիայի նիստում լսվեց նաև Հայկական ՍՍԽ ԴԱ Դրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Ս. Հարությունյանի զեկուցումը՝ «Դրական հերոսի կերպարը սովետահայ գրականության մեջ» թեմայով:

Զեկուցողը նշեց, որ դրական հերոսի կերպարի կերտման հարցը սոցիալիստական ռեալիզմի, ռեալիստիկ սովետական գրականության հիմնական հարցն է: Դրական կերպարի կերտման հարցը լուծվում է սոցիալիստական ռեալիզմի մեջ:

Սովետական մարդը — անհատի դարգացման բարձրագույն աստիճանն է նշանավորում և մարմնացնում է դրական իրականությունը — սոցիալիստական կյանքը:

Սոցիալիստական հասարակությունը կառուցող, այդ հասարակության և մարդկության պրոգրեսի համար պայքարող սովետական իրական մարդու ճշմարտացի, բազմակողմանի և խորը իդեական կերպարը — դրական հերոսի կերպարն է:

Սովետական գրականության մեջ դրական հերոսի կերպարը սկզբունքորեն նոր որակի երևույթ է մարդկության համաշխարհային կուլտուրայի մեջ:

Դրական հերոսի կերպարը սովետահայ գրականության մեջ իր սկիզբն է առնում պրոլետարական ռևոլյուցիոն գրականության, մասնավորապես Մաքսիմ Գորկու ստեղծագործության ակունքներից և կրում է նրա բարեբար ազդեցությունը:

Հայկական կլասիկ գրականությանը անտառոնիստական հասարակության սահմանափակվածության պայմաններում հանգեց զը-

րական ապագայի դրական մարդու կերպարի կերտման իդեալին:

Սովետահայ գրականությանը դրական հերոսը սկզբնական շրջանում սոցիալիստական ռևոլյուցիայի մարտիկն է, երկրի անաստության վերականգնման համար մարտնչող սովետական մարդը, միաժամանակ արևելքի ժողովուրդների ռևոլյուցիոն պայքարի մարտիկը:

Սովետական գրողները հաղթահարելով ռեալիստիկ տարիների արստրակա կոսմոպոլիտ ոճը, նախապատրաստեցին անցումը սոցիալիստական ռեալիզմին:

Պատմական մեծ անհատների, մեծ առաջնորդներ Լենինի, Սաալինի և ժամանակակից կոնկրետ անձնավորությունների պատկերումը սովետահայ պոեզիայի և դրամատուրգիայի ձևեր բերած նվաճումներից մեկն է դրական հերոսի կերպարը գծելու բնագավառում:

Սոցիալիստական վերակառուցման և մեր երկրում սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանի դրական հերոսը հարստացած կյանքի փորձով հանդես է գալիս որպես պատմությունը ստեղծող հերոս:

Սովետական մարդու դրական կերպարն իր ավելի ցայտուն արտահայտությունը գտավ Հայրենական Մեծ պատերազմի շրջանի գրականության մեջ:

Համ. (Բ) Գ Կենտկոմի որոշումները գրականության և արվեստի վերաբերյալ և ընկ. Ժողանվի զեկուցումը ու ելույթները սովետական կուլտուրայի՝ սոցիալիստական ռեալիզմի ուղիով էլ ավելի զարգանալու նոր էտապը նշանավորեցին:

Ելույթ ունեցող Ճեյիշվիլին նշեց, որ հայ և վրացական եղբայրակից սովետական գրականությունները նույն ուղիով են ընթանում և մեծ հաջողություններ են ձեռք բերել, բայց և այնպես Չապայևի, Կորյազինի (Վինչպես էր կոփվում պողպատը մեջ) պես հերոսների կերպարի կերտման հարցը դեռ մնում է կանգնած հայկական և վրացական սովետական գրականության առջև: Դժնագատները պետք է օգնեն գրողներին այդ հարցը լուծելու:

Վրացական ՍՍԽ ԳԱ գրականության ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից Վ. Փղենաին բարձր գնահատական տալով ընկ Ս. Հարությունյանի զեկուցումը նշեց, որ քննարկվող հարցը սովետական գրականության առջև ծառացած հիմնական հարցն է: Բացասական կերպարները վրացական և հայկական սովետական գրականության մեջ ավելի սառնափրա և հաջող են գծագրվում, քան դրական կերպարները: Ազգային սովետական գրականությունների մեջ գրական հերոսը պետք է

պատկերվի ուղղափառ կերպարանքով, միաժամանակ պետք է հանդիսանա ուղեւորական մարտերով հատկանշանքների լայն բնութագրացման հիման վրա կերտված կերպար, այս ուղղությամբ առաջին քայլերն արվում են, այժմ պետք է էլ ավելի համարձակ առաջ ընթանալ:

Մայիսի 25-ի առավոտյան շարունակվեց պատմության ակցիայի նիստը, Վրացական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի ավագ զիա. աշխատակից Բերանիշվիլին ղեկընցում կարգաց ռոնս: Խելաշվիլու հասարակական և քաղաքական իդեաները: Թեմայով:

Իոնա Խելաշվիլին (մեռել է 1837 թ.) զբեղ է բաղմաթիվ սխուլաստիկ աշխատություններ, մեծ հեղինակություն է վայելել Պետերբուրգի վրացական գաղութում: Նա ունեցել է գյուղացիական ծագում և արտաստյալ է գյուղացիություն իդեոլոգիան՝ Վրաստանում ֆեոդալիզմի ֆոթաբայան պայմաններում: Խելաշվիլին զբաղված գնահատական աւով հանդերձ Հերակլ 2-րդի և Գեորգի 12-րդի գործունեությունը, խարազանել է վրաց ազնվականների պարագիտիզմը, ազիտությունը և գյուղացիության անսանձ կեղեքումը նրանց կողմից: Խելաշվիլին կողմնակից էր ճարտական իրավունքի վերացմանը, աւկայն նա հեռու էր քաղաքականությունից և քաղաքական պայքարից: Խելաշվիլին կողմնակից էր ռուսական օրինանացիային, գանելով, որ Վրաստանը փոքր երկիր է և առանց հովանավորող ուժեղ պետության չի կարող պաշտպանվել: Նրա կարծիքով ռուսական պետության մեջ հաշվի կառնվեն ոչ թե ազնվական ծագումը և տոհմը, այլ ամեն մեկի անձնական բարեմասնությունները և ծառայությունները:

Խելաշվիլին քարոզում էր կրթել և լուսավորել խավար ժողովրդին: Նա կոմունակից էր համբերություն ազգային և դավանաբանական հարցերում, միաժամանակ վրացական հայբենասեր էր և վրացական դարավոր կուլտուրայի ջաաագով:

Ջեկուցման առթիվ ելույթ ունենալով Վրացական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ն. Բերանիշվիլին հայտնեց այն միտքը, թե Խելաշվիլուն չպետք է պարտավորեցնել, որպեսզի նա արձագանքեր գյուղացիական ապստամբություններին ցարիզմի դեմ, նա կարող էր ցարիզմի գաղութային քաղաքականությունը չնկատել: Ելույթ ունեցող Խ. Մոմջյանը նշեց, որ ղեկուցման թեղերում ցարիզմի իդեալիզացիայի վտանգ է նկատվում: Ավագ զիաական աշխատակից Ն. Մախարաձեն հնարավոր է համարում գյուղացիական իդեոլոգիայի և միապետականության դուզակցությունը Խելաշվիլու մոտ, առարկում

է ամենաբխիտ-ղեմոկրատի հասկացողություն դեմ:

Մայիսի 25-ի առավոտյան նիստում Հայաստանի Պետական Պատմական Խանդարանի ղերեկտոր Կ. Ղաֆադարյանը ղեկուցեց Դվին քաղաքի պեղումների մասին:

Դվինը հնագույն բնակավայր է եղել: 4-րդ դարում հայ Արշակունի թագավոր Խոսրով Կոտակր այստեղ պալատներ է կառուցել, անտառ է տնկել: 5—7-րդ դդ Դվինը հանդիսացել է Մարդպանական Հայաստանի մայրաքաղաքը, մայրաքաղաքի դերը պահպանել է նաև արաբական տիրապետության շրջանում 7—9-րդ դդ., այնուհետև մինչև 14-րդ դարը եղել է էմիրության կենտրոն, տոկոթա-արհեստագործական մեծ քաղաք, 14-րդ դարում դադարել է գոյություն ունենալուց:

Պեղումները կատարվել են քաղաքի կենտրոնում, ուր համարյա ամբողջովին բացված է Դվինի Կաթողիկե եկեղեցին, որը հայտարերվել էր դեռ 1907 թ.: Սկզբնապես այդ եկեղեցին կառուցված է եղել 5-րդ դարում, որպես եռանավ բաղիլիկա արտաքին սրահներով, իսկ 7-րդ դարի սկզբներին վերածվել է կենարոնագմբեթ սրահի, հարավային և հյուսիսային արսիդներով: Մայր եկեղեցուց ոչ հեռու բացվել են մի փոքրիկ բաղիլիկ եկեղեցու հիմքերը: Քաղաքացիական ճարտարապետության պատմության համար վերին աստիճանի մեծ նշանակություն ունի մայր տաճարից մի քանի մետր դեպի հարավ բացված այսպես անվանված Կաթողիկոսական պալատը, որի կենտրոնում եղել է ութ սյուներով զարդարված մի դահլիճ (11,60X29 մետր), որի հարավից և հյուսիսից եղել են հնգական փոքր սենյակներ: Պահպանվել են 7 սյուների բազաները և հսկայական ծավալի մի խոյակ արխայիկ քանդակներով:

Պեղումները կատարվել են նաև քաղաքի միջնաբերդում, որը գտնվում է հարթ դաշտերի վրա իշխող մի բարձր բլրի վրա, շրջապատված հաստաբետ պարիսպներով, որոնք կառուցված են հում աղյուխից: Բլրի վրա կատարված պեղումների ժամանակ բացվել են 11—13-րդ դդ. աարերի ժամանակներում կառուցված և իրար խառնված շենքերի մնացորդներ: Պեղումների ժամանակ հայտնաբերվել է հսկայական քանակությամբ կերամիկա, այդ թվում հասարակ, ջնարակած կերամիկա, ֆայանս անդական արաադրության և ներմուծված իրանիդ, Ասորիից, ապակեղեն, մետաղե իրեր և ղենքեր, մեծ քանակությամբ դրամներ (6—13-րդ դարերի), այդ թվում 6—7-րդ դդ. սասանյան և բյուզանդական դրամների գանձ:

Դվինը հայկական միջնադարյան քաղաք:

ներից ամենից ավելի երեսար հյանք է ունեցել և նրա հնազանդական ուսումնասիրությունը խոշոր նշանակութիւն ունի միջնադարյան քաղաքի, որա կուլտուրայի, արհեստների և առևտրական կապերի ուսումնասիրության տեսակետից:

Ջեկուցման առթիվ ելույթ ունեցավ ավագ դեռ. աշխատակից Բ. Առաքելյանը, որը լրացնելով զեկուցողին, նշեց թե Դվինը եղել է միջնադարյան նորմերով ձևավորված խոշոր առևտրա-արհեստագործական քաղաք և վարչական կենտրոն, ունեցել է միջնաբերդ, բուն քաղաք, որը միջին դարերում կոչվում էր շահաստան և շրջափակված էր եղել քաղաքի պարիսպներով և Ռաբազ՝ քաղաքի պարիսպներից դուրս: Դվինը հանդիսացել է հարևան ժողովուրդների կուլտուրաների խառնակման կենտրոններից մեկը, և նրա ուսումնասիրութիւնը լուրջ տեղական նշանակութիւն չունի: Վրացական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Լ. Մացուլիշը բարձր գնահատական տվեց Դվինի պեղումներին:

Մայիսի 25-ի երեկոյան տեղի ունեցավ սեսիայի երկրորդ պլենար նիստը, որտեղ լսվեց երեք ղեկուցում:

Վրացական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ջիբորափան ղեկուցեց «Պատմականության պրոբլեմը ժամանակակից արտասահմանյան լեզվաբանության մեջ» թեմայով: Ջեկուցողը նշեց, որ լեզվաբանութիւնը որպէս դիսցիպլինա առաջացավ լեզվի նկատմամբ պատմական տեսակետի գործադրության շնորհիվ, որով վերացվեց բառերի և նրանց մեկնաբանության նկատմամբ իշխող կամայականութիւնը: Պատմական քերականութիւնն էլ դարձավ դիտական քերականութիւն, հակադրվելով ֆիլոլոգիական (այսինքն տեխնիկական), ինչպէս և ուսցիոնալիստական քերականութիւնը, որոնց օտար էր պատմականութիւնը:

Էնդելսն իր ժամանակին գնահատել է լեզվաբանության զարգացումը 19-րդ դարում որպէս պատմական լեզվաբանության հաջողութիւնը:

Պատմական լեզվաբանութիւնը լայնորեն օգտագործում է համեմատութիւնը, սակայն համեմատութիւնն առանց պատմության զրկվում է հիմքից:

Պատմականութիւնից հեռանալը ժամանակակից արտասահմանյան իդեալիստական լեզվաբանության առավել հասկանալի կողմն է հանդիսանում: Ջեկուցողը քննադատության ենթարկեց դե-Սոսյուրի սոցիոլոգիական կոնցեպցիան, որով պատմութիւնից հեռանալը տեսական հիմնավորում է ստանում, առաջ

է քաջվում սիստեմի դադափարը և հաստատվում է ստատիկ սոցիոլոգիական մոտեցման պրիմատ նշանակութիւնը: Դե-Սոսյուրի հակապատմական կոնցեպցիայի հետագա դարացումը հանգավ ստրուկտուրալիզմին, որը հենվում է լեզվական սիստեմի վրա, դիտելով այն ժամանակից և պատմութիւնից դուրս: Դրանով հանապարհ է բացվում բառերի կամայական մոտեմամբ և մեկնաբանության համար (օրինակ թուրքական «Դյաւնեշ-դիւ»-ի կոնցեպցիան):

Պատմականութիւնից զուրկ սոցիոլոգիզմին ուղեկցող լեզվաբանութիւնը պետք է հակադրի պատմական հողի վրա դրված սոցիոլոգիզմը, որը կոնկրետանում է մատերիալիստական դիալեկտիկայի սկզբունքներով:

Երկրորդ ղեկուցումը պլենար նիստում կարգաց չայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Լոմոնոսովսկին «Հայ-ռուսական հարաբերութիւնները 18-րդ դարի 80-ական թ.թ.» թեմայով: Ջեկուցողը նշեց, որ 18-րդ դարի 80-ական թ.թ. սկզբներին Արևելյան Հարցը Ռուսաստանի համար առանձին նշանակութիւն է ստանում և այդ կապակցութեամբ կովկասյան հարցերը առաջին պլանի վրա են դրվում: Մերձկասպյան շրջանների նվաճումը, Բարթի-կախեթական թագավորութիւնը Ռուսաստանի հովանու տակն առնելը և հայկական պետութեան վերականգնումը հովկասում ռուսական քաղաքականութեան առաջնահերթ հարցերից են գտնում:

Ջեկուցողը փաստաթղթերի հիման վրա ցույց տվեց որ 1783—1784 թ. թ. Ռուսաստանը պատրաստում էր պարսկական արշավանք, որի նպատակներից մեկն էր հայկական պետութեան վերականգնումը: Պետք է վերականգնվեր նաև Ալբանական պետութիւնը, իսկ վրացական թագավորութեան սահմաններն ընդարձակվելու էին: Նշված պլաններն իրականացնելու համար Ռուսաստանը բանակցութիւններ է վարում հայերի հետ:

Նաբաբադի և Երևանի հայերը դիմում են ռուսներին, խնդրելով գործ ուղարկել Հայաստան և խոստանում են ամեն տեսակ օգնութիւն ցույց տալ ռուսական զորքերին:

Երևանի և Նաբաբադի հայերը միաժամանակ սեծ իւրյսեր էին դնում Վրաստանի և վրաց թագավոր Հերակլի վրա:

Ռուսների հետ բանակցութիւններ վարող Հովսեփ Արղությանն իր նամակներով նույնպէս հորդորում էր հայերին Հերակլի հետ կապեր հաստատել և ստանալ նրա օգնութիւնը: Բնորոշ է, որ 18-րդ դարի բոլոր նշանավոր հայ գործիչները Հայաստանի ազատագրութիւնը պարսից ու թուրքական լծից կա-

պում էին և Ռուսաստանի և Վրաստանի հետ, այդպիսին էր Հովսեփ Էմինի, նաև Մադրասի խմբի քաղաքական ծրագիրը:

1786 թ. անցքերը, այն է՝ դրուժյունո իրանում, կովկասյան լեռնականների շարժումները, Օմար-խանի արշավանքը Վրաստան, հրանական խաների դաշինքը Թյուրքիայի հետ, ռուսական թիկունքի անկայունությունը և սպասվող պատերազմը Թյուրքիայի հետ ստիպեցին նկատելիորեն և ակրորդին ոչ միայն հրաժարվել Հայկական ծրագրից, այլև ռուսական զորքերը դուրս բերել Վրաստանից: Այս անգամ ևս հայերին և վրացիներին միևնույն պատմական բախտը վիճակվեց:

Դրանից հետո էլ ասանաժականեր շարունակ ռուսական հովանու տակ հայկական պետություն ստեղծելու ձգտումը հանդիսանում էր բոլոր նշանավոր հայ գործիչների իդեալը: Սակայն ռուսական ցարիզմը չիրականացրեց և չէր էլ կարող իրականացնել հայկական պետության վերականգնման երազանքը:

Միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեոլուցիան բերեց հայ ժողովրդի ազատագրությունը և նրա պետության վերականգնումը:

Երկրորդ պլենար նիստը Թբիլիսիում ավարտվեց Հայկական ՍՍԻ ԳԱ թղթակից-անդամ Բ. Պրոտրովսկու ղեկուցմամբ՝ «Սկյութները և Կովկասը» թեմայով:

Զեկուցողը հնազիտական ավայնների հիման վրա ապացուցեց Անդրկովկասի կապերը սկյութների հետ: Պետք է վերանայել այն ասակեանը, թե բարբարոս կիժերու սկյութական ցողերի ներխուժումը կատասարոֆ առաջացրեց Առաջավոր Ասիայում: Կիժերու սկյութական ներխուժումը պայմանավորված էր Առաջավոր Ասիայի ներքին հասարակական քաղաքական դրության բարդացմամբ: Հին Արևելքի խոշոր պետությունների կազմի մեջ ժտնոդ առանձին փոքր երկրներն ուժեղանում և պայքար են սկսում խոշոր պետությունների դեմ: Այդ երկրների և ժողովուրդների դաշնակիցների դերում հանդես են գալիս կիժերներն ու սկյութները և այս եղանակով կազմվում է այլատարր խառը բանակ, որը կոչվում էր «Ummat mandai», Հին Արևելքի մեծ քաղաքների (Օրինակ Ալեք, Բաբելոն) պեղումների ժամանակ պարիսպների տրոսքին երեսի վրա գտնվել են մեծ քանակությամբ սկյութական սլաքներ, որոնք պատկանում են հարձակվող կողմին: Նույնպիսի սլաքներ հայտարարվել են ուրարտական քաղաքների պարիսպների մեջ (Թոփրակ-կալե), Հայկաբերդ, (Կարմիր-բլուր) Թեյքեբաթիների (Կարմիր-բլուր) պեղումները պարզորոշ կերպով ցույց

են տալիս, որ այդ քաղաքը կործանել են սկյութները: Լեռնային և Հյուսիսային Կովկասի սկյութները երկաթը ստանում էին Անդրկովկասի միջոցով:

Ուրարտական բնակավայրերի և Անդրկովկասի դանազան վայրերում կատարված պեղումներից հայտաբերված հնազիտական նյութերը հաճախ առաջադրում են տեղական կուլտուրայի և սկյութականի կապերը, մյուս կողմից ուրարտական և անդրկովկասյան այլ վայրերի կուլտուրաների ազդեցությունը ակնհայտ կերպով կրող իրեր գտնված են Կուրանում, Մերձ-ադրյան շրջաններում և այժմյան Ուկրաինայում: Այդ կապերը վերաբերում են 7—8-րդ դարերին ժեր թվ. առաջ:

Զեկուցման առթիվ ելույթ ունեցավ Գ. Ղափանցյանը, որը խոսեց մի քանի տերմինների (գուրյան, մանդա, դուրգ) ստուգաբանության մասին: Վրաստանի Պետական թանգարանի ղեկավար Ա. Ափաքիձեն գտնում է, որ ավելի շատ ապացույցներ են հարկավոր, որպեսզի հաստատվի, թե Անդրկովկասի բրոնզի կուլտուրան կապեր ունի սկյութականի հետ, ավելի շատ փաստեր են հարկավոր Արևելքի հին պետությունների կործանման գործում սկյութների գերը պարզելու համար:

Մայիսի 26-ին սեսիայի մասնակիցները Թբիլիսիից մեկնեցին Երևան:

Մայիսի 27-ի առավոտյան սեսիայի մասնակիցները մեկնեցին Կարմիր բլուր՝ պեղվող ուրարտական բերդաքաղաքը տեսնելու, որից հետո այցելեցին Մասենադարանը:

Նույն օրը երեկոյան տեղի ունեցավ սեսիայի երրորդ (որևանում առաջին) պլենար նիստը, որտեղ «Երկրի աստիճանային չափումներն ըստ հայկական ազբյուրների» ղեկուհումով հանդես եկավ ակադեմիկոս Մատուդյանը: Միջոցակետի շրջագծի՝ էրատոսթենեսի և ուրիշների կատարած չափումների իսկական մեծությունը ժամանակակից երկաթյան չափի միավորներով ստույգ հայտնի չէ, քրոմիստե վիճելի է ստադիոնի չափը, որով կատարված է եղել միջօրեականի չափումը: Հայկական ազբյուրների (Մովսես Քորենացուն վերագրվող աշխարհացույցի համառոտ և ընդարձակ տեքստերի) ուսո. Ֆասիերության հիման վրա ակադ. Մանանդյանը էրատոսթենեսի ստադիոնի չափը որոշում է 159,8 մետր: Հայկական աշխարհացույցի համառոտ տեքստում վկայություններ են պահպանված նաև Պողոմեսի և էրատոսթենեսի ստադիոնների հարաբերության մասին, այն է 140/100:

էրատոսթենեսի և Պողոմեսի ստադիոնների (որոնք հին չափումների հիմնական միա-

վորներն էին) չափի ճշգրտումը հնարավորություն է ընձեռում ժամանակակից երկարության չափերով ճիշտ որոշել միջօրեականի և երկրագնդի աստիճանի հնում սահմանված չափը:

Հայկական աղբյուրներում հանդիպող ասպարեղը և մղոնը ոչ թէ էրատոսթենեսի են, ինչպես սխալմամբ ենթադրվում է, այլ Մարինին — Պտղոմեոսին են:

Երկրի աստիճանային չափումների տեսակետից բացառիկ արժեք է ներկայացնում Անանիա Շիրակացուն վերագրվող առմարը, որն արտահայտում է բյուզանդական շրջանի աստղագիտական հայացքները: Տոմարում երկրի «երկարությունը ու լայնությունը» համարվում է 180,000 սաադիոն:

Հայկական աղբյուրների հիման վրա ճշգրիտ կերպով որոշվում է սասանյան Պարսկաստանի չափերի սխալմամբ և ստացվող եզրակացությունները կասկածանքի տակ են դնում: Գուլիշի չափադետական աշխատության մեջ արված ենթադրությունները, ինչպես և նրա հաշվումները Ասորիքի, Փյունիկեի և Փոքր Ասիայի ճանապարհների չափերի վերաբերյալ:

Ջեկուցման սովորվ ելույթ ունեցավ Վրացական ՍՍԽ ԳԱ ակադեմիկոս-բարտուղար Ի. Վեկուան, որը բարձր գնահատեց զեկուցման արժանիքներն ու նշանակությունը:

Նույն պլինար նիստում Շ. Զիձիգուրին ընթերցեց Վրացական ՍՍԽ ԳԱ իսկական անգամ Գ. Ծերեթիլու զեկուցումը «Արմազյան գիրը և վրացական այբուբենի առաջացման պրոբլեմը» թեմայով:

Մցխեթ-Արմազիի պեղումների ժամանակ հայտնաբերված գիրը զենեոթիկոբեն կապվում է արամեական գրի հետ, բայց մի քանի տառերի ինքնատիպ գծագրությամբ և պալեոգրաֆիկ առանձնահատկություններով զատվում է որպես արամեական գրի ինքնուրույն ճյուղ: Արամեական բոլոր գրերից Արմազյանն ավելի մոտ է պահլավականին և պարսկականին: Նկատի ունենալով, որ արմազյան գիրը ավելի վաղ շրջանի է պատկանում, քան պարսկական մոնումենտալ գրի հնագույն հուշարձանները, կարելի է ենթադրել, որ պահլավական և պարսկական գրերը հետեանք են արմազյան գրին մոականգնած արամեական մի տարբերակի դիֆերենցիացիայի:

Վրաստանի հին մայրաքաղաքում հայտաբերված գրի համեմատությունը վրացական գրի հետ իրավունք է տալիս պնդելու կապի առկայությունը նրանց միջև: Սակայն վրաց այբուբենում որոշ տառերի ավելի արխայիկ ձևերը ենթադրելի են տալիս թե վրաց այբու-

բենը արմազյան գրի հետագա զարգացումը չէ, այլ այս երկուսն էլ մի ընդհանուր արամեական աղբյուրից են ծագում:

Վրացական գիրը միաժամանակ անկասկածելիորեն մերձենում է հունականի հետ, որն հավանաբար, տեղի է ունեցել ավելի ուշ, այն է քրիստոնեության շրջանում:

Մայիսի 28-ի առավոտյան Վրացական ՍՍԽ ԳԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Գ. Գորիշիշվիլին հաղորդեց Պատմության ինստիտուտի վերջին ժառանգում կատարած հնագիտական ուսումնասիրությունների արդյունքները:

Զավախաշվիլու անվան Պատմության ինստիտուտը հանդիսանում է Վրաստանում կատարվող պեղումների գլխավոր կազմակերպիչն ու ղեկավարը:

Աչքի ընկնելով ուժեղ կերպով արտահայտվող ինքնատիպությանը՝ արևելյան և արևմտյան Վրաստանի հնագիտական հուշարձանները մի ամբողջություն են հանդիսանում և միաժամանակ սերտորեն կապված են ամբողջ հովկասի և Առաջավոր Արևելքի կուլտուրայի հետ:

Վրաստանի կուլուսուր-պատմական զարգացման աստիճանը, որը բացահայտվում է առաջնակարգ հնագիտական նյութերով, թույլ է տալիս պնդելու, որ Վրաստանը եղել է Առաջավոր Արևելքի հնագույն կուլտուրական կենտրոններից մեկը:

Վրաստանում կատարվող պեղումներից ամենանշանավորը Արմազիա-Քեվիի և Բադինեթիի պեղումներն են (հին Մցխեթ մայրաքաղաքում), որոնք հարուստ և ասաշնակարգ նյութեր են տալիս հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջաններից: Այդ նյութերը ցույց են տալիս կուլտուրայի ակունքները և բարձր զարգացումը Վրաստանում և մեծապես օգնում են լուսաբանելու Վրաստանի հառադական զարգացման և պեռականության ձևավորման կարևորագույն հարցերը:

Ջեկուցման սովորվ ելույթ ունեցող Բ. Պիոարովսկին նշեց, որ Սովետական Վրաստանի հնագետների նվաճումները փայլուն են: Տեղական նշանակություն ունեցող պեղումներից այժմ անցնում է կատարված ընդհանուր կովկասագիտական նշանակություն ունեցող պեղումներ կատարելուն: Առաջարկում է հաճախ դումարել հնագիտական կոնֆերանսներ Անդրկովկասում:

Ի. Առաքելյանը նշեց Վրաստանում կատարվող պեղումների հսկայական նշանակությունը գիտության համար և առանձնապես Արմազիա-Քեվիի և Բադինեթիի պեղումների նշանակությունը, մանավանդ որ այդ պեղում-

ները Անդրկովկասում առաջիններն են, որոնք այնքան առատ նյութ են տալիս հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջանի վերաբերյալ։ Որպես ուրախալի երևույթ պետք է ընդգծել, որ Անդրկովկասի հնադեաները լայն ասպարեզ են ելել, առաջ են քաշում ընդհանուր կովկասադիտական և պատմադիտական պրոբլեմներ և աշխատում են լուծում տալ նրանց։ Այդ տեսակետից առանձնապես մեծ է Արմաղի Խելի Բադինեթի պեղումների նշանակությունը, բայց դժվար է համաձայնել այն կարծիքի հետ, թե այդ պեղումները ապացուցում են ստրկատիրական հասարակության առկայությունը Վրաստանում։ Հնագեաները պետք է աշխատեն բացահայտել հնադարյն կուլտուրայի զարգացման համապատասխան պրոցեսը և նրա հաջորդականությունը, միաժամանակ ցույց տան ավելի կուլտուրայի առանձնահատկությունները։ Սակայն այս կամ այն տեսակետի կուլտուրան, ինչ որ նոր կուլտուրա կամ յուրատիպ կուլտուրայի կենտրոն համարելու տենդենցից պետք է հրաժարվել։ Այս տեսակետից քննությունն չբռնեց «Կուլանյան կուլտուրա» հանրահայտ որակավորումը, քննադատելի է նաև կոլեկտիվական կուլտուրան որպես կոբանականի արմատներս դիտելը։

Ս. Երեմյանը Վրաստանում ստրկատիրական հասարակության առկայությունը վերաբերող թեզիսը ինքնին հետաքրքիր երևույթ է համարում։ Կոլեկտիվական կուլտուրան կոբանականի արմատները համարելը դիտություն մեջ ընդունված է։

Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Հովհաննիսյանը նշելով, որ պեղումները նոր հորիզոններ են բացում Անդրկովկասի պատմության ներքին առջև, անհրաժեշտ է համարում Հայաստանում ևս մեծարկել հելլենիստական — հռոմեական շրջանի բնակավայրերի, մասնավորապես Դաւանի բերդի պեղումները։

Վրացական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Լ. Մացուլիչին իր գեկուցման մեջ Ասպարուխ Բղեշի Արմաղիում բացված դամբարանի նյութերի ուսումնասիրության հիման վրա ցույց տվեց Վրաստանի և ամբողջ Անդրկովկասի կուլտուրական կապերը հյուսիսի հետ։ Ձեկուցողը ենթադրում է, որ ապակին, մանավանդ կրկնաշերտ ապակին և մետաղե որոշ իրեր և նրանց ձևերը հովկասից են անցել հյուսիսի զեպի հարավային Ռուսաստան։

Վրացական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Չուբինաշվիլին դիտում է, թե գեկուցման մեջ այնքան էլ պարզ չէ, թե ինչն է Անդրկովկասից հյուսիս դնում և ինչպիսի կապեր են եղել հյուսիսի հետ հեռավոր անցյալում։

Ձեկուցման մեջ արժեքավոր է այն դիտողությունները, որ Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրաներն ընդհանուր արմատներ ունեն, բայց միասնության հետ միասին ունեն և իրենց հատուկ ազդային կերպարանքը։

Մայիսի 28-ի առավոտյան նիստից հետո սեսիայի մասնակիցները այցելեցին Դվին՝ այնտեղ կատարված պեղումների հետանցով բացված հուշարձանները դիտելու։

Մայիսի 28-ի երեկոյան բանասիրական սեկցիայի նիստում լսվեց երեք գեկուցում։

Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Ա. Ղարիբյանը գեկուցեց հայերեն լեզվի պատմության շրջանաբանման մասին։ Ձեկուցողը հերքեց ինչ հայադիտության այն տեսակետը, ըստ որի զրաբարը 5-րդ դարում եղել է մոնոլիտ համաժողովրդական լեզու և այնուհետև անընդհատ անկում ապրելով այլասերվել է։ 12—13-րդ դ. առաջացած միջին հայերենը ըստ հին հայադիտության այլասերված զրաբարն է։ Ելակետ ընդունելով Ն. Մառի տեսակետը, որ հին Հայաստանում եղել է միասնական հայերեն լեզվի երկու հակադիր սխեմա-ֆեոդալ ազնվականության լեզուն և աշխատավոր ժողովրդի խոսակցական բարբառները՝ գեկուցողը գտնում է, որ հայ լեզվի պատմությունը այդ հակադիր սխեմաների պայքարի և փոխադարձ ներթափանցման պատմություն է։

Հայ լեզվի զարգացման առաջին շրջանը բռնում է 5—12-րդ դարերը, երբ զրականության մեջ հաստատված էր զրաբարի անբաժան տիրապետությունը, իսկ ժողովրդական խոսակցական լեզուն պատահական ներթափանցումներ է ունենում զրավոր լեզվի մեջ։

Լեզվական երկու սխեմաների պայքարը ներկայանում է որպես ժողովրդական խոսակցական լեզվի մշտական ձգտումը թափանցելու զրավոր լեզվի մեջ, իսկ զրաբարը ձգտում է արգելակել այդ ներթափանցումը և վտարել ժողովրդական լեզուն զրականությունից։ Այդ պայքարը վճռվեց ժողովրդական լեզվի օգտին։ Տոհմիկ ազնվականության ոչնչացմամբ զրաբարը 12-րդ դարում դադարում է խոսակցական լեզու լինելուց և մնում է որպես զրի և եկեղեցու լեզու։

12—13-րդ դ. Հայաստանում ֆեոդալիզմի զարգացման նոր փուլը քաղաքների և քաղաքային կյանքի զարգացումը կյանքի են կոչում միջին հայերենը, որի հիմնական բաղադրուցիչ էլիմենտներից մեկը ժողովրդական խոսակցական լեզուն էր, որը սինթեզվեց զրաբարի հետ առաջացնելով նոր զրական լեզու, ժողովրդական բարբառներն էլ ավելի մեծ շափերով թափանցում են միջին հայերեն

գրավոր լեզվի մեջ, որը մեռնում է 15—16-րդ դարերում, քաղաքների ավերման, քաղաքային կյանքի քայքայման և արադրողական ուժերի զեղրողացիայի հեռանքով:

Սրբորդ էտապը կազմում է աշխարհարար լեզվի առաջացումն ու զարգացումը, որը կապված է բուրժուական հարաբերությունների առաջացման հետ՝ դադարեցնելով և Անդրկովկասում: Աշխարհարարը ոկզբնավորվել է 17-րդ դարում, բայց նրա ձևավորումը տեղի ունենցավ 19-րդ դարում: Աշխարհարարում ավարտվում է ժողովրդական խոսակցական լեզվի հաղթանակը դրարարի նկատմամբ: Բուրժուազիան մշակում է ազգային լեզուն, սակայն բուրժուական սահմանափակվածության պայմաններում հայերեն ազգային լեզուն համաժողովրդական չի դառնում:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով հայերենը թևակոխում է իր զարգացման շրջանը: Գրական լեզվի և բարբառների միջև եղած սոցիալական հակասությունները վերանում են, հասարակության մեջ սոցիալական հակասությունների աստիճանական վերացմամբ միասնական ժողովուրդը մշակում է իր միասնական լեզուն, որն աննախընթաց ծաղկում է ապրում, դառնալով Սովետական Հայաստանի պետական և համաժողովրդական լեզուն: Բարբառներն արդ կերպով սկսում են մեռնել: Արասահմանյան հայ գաղութներում իր աղդային կերպարանքը կորցնելու վտանգին ենթակա հայերեն լեզուն, չնայած նրա պահպանողականությանը, ենթարկվում է իշխող ժողովուրդների մտածողությանը և լեզվի ազդեցությանը: Ղրկվում է որպես ազգային լեզու զարգանալու հեռանկարից և դատապարտվում է հեռաձայնության ու աստիճանական մահացման: Սովետական Հայաստանում ծաղկում է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալական լեզվական կուլուրում:

Սույթ ունենալով Ա. Շանիձեն գանում է, թե հայերենի զարգացման առաջին փուլը բռնում է ոչ թե 5—12-րդ դ.դ., այլ այդ լեզվի առաջացման և ձևավորման ժամանակաշրջանը, որը ընկնում է 5-րդ դարից առաջ՝ Դավար է համաձայնել գեկուցողի հետ, երբ նա 5—12-րդ դարերը դիտում է որպես հայ լեզվի զարգացման մի փուլ: Զեկուցումը բավականաչափ կոնկրետ չէր և հայերենի պատմության էպոխաների բաժանումը կատարված է առավելապես սոցիոլոգիական հիմունքներով, մինչդեռ հարկավոր էր ևլնել լեզվական մասերիսից և ցույց տալ յուրաքանչյուր էպոխայի հատկանշական գծերը:

Ի. Հափանցյանը նույնպես դառնում է, որ

գեկուցողը ավելի ընդհանուր սկզբունքներից էր ելնում քան կոնկրետ մասերիսից: Անհրաժեշտ էր հաշվի նսան լեզվի համեմատական ինքնուրույնության հետ և ցույց տալ հայերենի զարգացման յուրաքանչյուր փուլի առանձնահատկությունները:

Վրացական ՍՍԻ ԳԱ Գրականության Ինստիտուտի ավագ դիակական աշխատակից Վ. Ժդենաին գեկուցում կարդաց վրացական սովետական դրականության շրջանաբաժանման հարցի շուրջը:

Վրացական ոովետական դրականությանը ծնունդ է առնում Վրաստանում սովետական կարգեր հաստատվելու որից: Վրացական սովետական գրականության պատմության առաին փուլը նրա առաջացման ձևավորման փուլն է 1921—1925 թ.թ., երկրի անանոթության վերականգնման շրջանում: Այս փուլում աչքի է ընկնում գրողների կազմակերպական և իդեական միասնության բացակայությունը, գրական աարեր խմբակների և ուղղությունների առկայությունը, մինչ սովետական շրջանի առաջավոր գրողների անցումը ոովետական դիրքերը:

Երկրորդ էտապը բռնում է 1926—1931 թ.թ. երկրի ոոցիալիսական վերակառուցման շրջանը: Տեղի է ունենում գրողների մերձեցումը ոովետական պետության քաղաքականությանը, երեան է գալիս ոովետական թեմատիկան, գրական ինտելիգենցիայի ավագ սերունդը մասսայաբար անցնում է սոցիալիսական շինարարության դիրքերը, ռևոլուցիայի աարիներին աճած գրական ռոժերը կազմում են դրականության առաջատար կորիզը: Նախապատրաստվում է գրողների կազմակերպական միասնությունը:

Վրացական սովետական գրականության զարգացման հաջորդ փուլը ընդգրկում է 1932—1942 թ.թ. դա Սաալինյան հնգամյակների իրականացման, ոոցիալիսական հասարակության կառուցումը ավարտելու, Սաալինյան կոնսախաուցիայի ժամանակաշրջանն է, երկրի պետական, անանոթական և կուլուրական հզոր վերելքի ժամանակաշրջանը: Վրացական սովետական դրականությունը անդրադարձնում է այս մեծ պատմական անցքերը, առաջանում և ամրապնդվում է գրողների կազմակերպական և իդեական միասնությունը, ծաղկում են գրական բոլոր ժանրերը վրականության մեջ, հառատավում է Գորկու սոցիալիստական ռեալիզմը: Վրացական սովետական գրականությունը բռնում է առաջավոր տեղերից մեկը Սովետական Միության եղբայրակից առաջավոր դրականությունների շարքում (Լ. Բերիա, գեկու-

ցում Վրաստանի բոլշեիկների 10-րդ համագումարում, 1937 թ. մայիս)։

Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին Վրացական զորքները և բանաստեղծները իրենց բոցավառ հայրենասիրական երկերով հերոսության էին ոգեշնչում մարտիկներին, վերականգնում էին մեր առջև վրացական ժողովրդի անցյալը և բերիա։

Հետպատերազմյան շրջանում վրացական սովետական զրականությանը սովետական բոլոր ժողովուրդների զրականությանների հետ միասին թեկոխել է զարգացման մի նոր փուլ, որի խնդիրները որոշված են զրականության և արվեստի վերաբերյալ Համ Գ(Բ) Կենտկոմի ընդունած որոշումների և ընկ. Ա. Ժգանովի զեկուցման մեջ։

Ելույթ ունեցող Ս. Հարությունյանը բարձր գնահատական տվեց զեկ. ման. Անդր-բազանյանով վրացական սովետական զրականությանը նա ասաց, որ Սովետական Վրաստանը զոհար է սովետական ռեսպուբլիկաների թվում և վրացական սովետական զրականությանը նույնպիսի մի զոհար է սովետական ժողովուրդների զրականությանների շարքում։ Այս ճեղք, որ զեկուցողը բավարար չափով կանգ չառավ վրացական նախասովետական զրականության տրադիցիաների և նրանց ժառանգության հարցի վրա կասկածանք է հարուցում վրացական սովետական զրականության առաջացման սրացուցային զուգադիպությունը Վրաստանում սովետական կարգերի հաստատման օրվա հետ, հիմնական զրական զեմքերի մասին պետք էր ավելի կոնկրետ խոսել և ավելի բացահայտել վրաց զրականության զարգացման յուրաքանչյուր փուլի առանձնահատկությունները։

Հ. Գրիգորյանը պնդում է թիվ 1928 թվի վրացական զրգների համագումարը պետք է կոչել ոչ թե առաջին համագումար, այլ միավորիչ համագումար, 1930-ական թվականների զրականությանը զեկուցողը բավականաչափ հարթ ու խաղաղ ներկայացրեց և բուրժուական նացիոնալիզմի արտահայտությունների մասին չխոսեց, Զեկուցումը ճիշտ է կազմված, նրա հիմնական դրույթները առարկություն չեն առաջացնում։

Հայկական ՍՍԽ ԳԱ Լեզվի ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Ա. Մուրվալյանը զեկուցեց հայ և վրաց լեզուներում հանդիպող կրկնավոր բառերի տեսակների մասին, շնչեղությունները հայերենը համարելով շնչեղության նրա շատ էլեմենտները, այդ թվում և կրկնավոր բառերը, համարում են նախամայր լեզվից ծագած երկվայթ, մինչդեռ այդ էլեմենտները և տվյալ

զեկուցման նյութը հանդիսացող կրկնավոր բառերը կապվում են անդական լեզուների հետ։

Կրկնավոր բառերը որպես ընդհանուր լեզվաստեղծական մտածողության նախնական երևույթ հատուկ են բոլոր լեզուներին, բայց առավել միջերկրածովյան, աֆրիկական և այսպես կոչված հարթական լեզուներին։

Կրկնավոր բառերը տարբեր լեզուներում երբեմն այնքան նման են, որ ասես թարգմանություն լինեն կամ պարզ փոխառություն, մինչդեռ այդ նմանությունները լեզվագիտական ստադիալ ընդհանրություն հետևանք են։

Ձեական տեսակետից կրկնավոր բառերը կարելի է բաժանել չորս խմբի՝ 1) բառեր, որոնք իրար հետ կապվում են առանց հնչյունական փոփոխության, 2) դիսիմիլացիայով կազմվող բառեր, 3) հնչյունական ածի կամ սզման միջոցով իրար հետ կապվող կրկնություններ, 4) բաղաձայնների հերթափոխությամբ կազմվող կրկնություններ։

Իմաստաբանական տեսակետից կրկնությունները ունեն հետևյալ նշանակությունները։

1. Բնաձայնական կրկնությամբ կապվում են նոր բառեր։

2. Կրկնությունների շնորհիվ առարկայի գաղափար արտահայտող բառերը զրահորում են այլ առարկաների հատկանիշները։

3. Կրկնությունները ուժեղացնում են իմաստը։

4. Կրկնությունները սովորաբար իրերի կամ երևույթների բաղապատկություն են ցույց տալիս։

Հայ և վրաց լեզուների մեջ կրկնությունները խոշոր մերձավորություն են ցուցաբերում թե՛ ձևական և թե՛ իմաստաբանական առումներով։

Ե. Լափանցյանը անհրաժեշտ է համարում կրկնությունները քննելիս հենվել անբասերի վրա և բառերը շանջատել տեքստից, Լավ է հրաժարվել երկրորդ, երրորդ ձևաքերից վերցվող (օրինակ ամերիկյան լեզուներին վերաբերող) նյութի ոչտաղործումից։

Մայիսի 29-ի առավոտյան պատմության սեկցիայի նիստում լսվեց չորս զեկուցում։

Պատմական գիտությունների թեկնածու Ա. Մնացականյանը զեկուցեց Հայրենական Մեծ պատերազմում 1941—1945 թ. թ. հայ ժողովրդի մասնակցություն մասին։

Սովետական բոլոր ժողովուրդների թվում հայ ժողովուրդն էլ մեծ Սաալիների կոչով պաշտպան կանգնեց Սովետական հայրենիքին, Հայ ժողովուրդը իր զավակներին ուղարկեց ֆրոնտ, թիկունքում վերակառուցեց տնակ-

սությունը ըստ ֆրոնտի պահանջներին կոչ արվեց ամբողջ աշխարհի աշխատավոր հայերին սկստպանել Սովետական Միությունը ֆաշիստական զավթիչներին:

Մոսկվայի պաշտպանության համար մղվող մարտերում և կերչի թերակղզում հայ ռազմիկները ցույց տվեցին իրենց անսահման սերն ու նվիրվածությունը սովետական հայրենիքին:

1942 թ. հայերը, վրացիները և ադրբեջանցիները սովետական մյուս ժողովուրդների հետ միասին և ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ հերոսական մարտեր մղեցին Կովկասի պաշտպանության, թշնամու առաջխաղացումը կանգնեցնելու և նրան ջարդելու ու ետ շարժելու համար:

Հայ ռազմիկներն աչքի ընկնող մասնակցություն ունեցան Ստալինգրադյան հերոսամարտին, որը պսակվեց հակառակորդի ջոխսի լուծմամբ:

1943 թ. ամառը հայ ռազմիկները աչքի ընկան Բելգորոդ-Կուրսկ-Սորոյ բնագծում գերմանական բանակների ջախջախմամբ համար մղվող մարտերում, Թամանյան թերակղզու աղատադրության և Դնեպրի համար մղվող ճակատամարտերում:

Սովետական Հայաստանի բանվորները և կոխսպիկները, ինսեկիդենցիան հերոսական աշխատանքով օգնեցին ֆրոնտին՝ Ամեն ինչ ֆրոնտի, ամեն ինչ հողթանակի համար նշանաբանի տակ:

Թշնամու թիկունքում Ուկրաինայում, Բելոռուսիայում, Դրիմում հայերը կազմակերպեցին պարտիզանական ջոկատներ և շարունակեցին պայքարը հակառակորդի դեմ: Արտասահմանում հաղարավոր հայեր մասն ֆաշիզմի դեմ կոմկոդ ղեմավորապետական երկրների բանակները, պարտիզանական ջոկատները, շատերն էլ իրենց միջոցներով օգնեցին ՍՍՄ Միությանը տանկային կալոնաներ կառուցելուն:

1944 թ. հարձակողական մարտերում զգալի էր հայերի մասնակցությունը Կարմիր բանակի հռչակավոր 10 հարվածներին, որոնք հանգեցին հակառակորդի հորդանների ջախջախմանը և սովետական երկրից դուրս շարժվելուն:

Հայ ժողովրդի զավակները մասնակցեցին Կարմիր բանակի ազաաարար միսիային՝ ֆաշիզմի կրնկի տակ հեծող եվրոպական ժողովուրդների ազաաարություն և մարդկային թաղաքակրթությունը փրկելու գործին:

Հայկական Թամանյան դիվիզիան հերոսական մասնակցություն ունեցավ Բեռլինի գրոհին և գրավմանը:

Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատե-
Տեղեկագիր 7-7

րազմում շխնայեց իր ուժերը և իր զավակների կյանքը: Սովետական ժողովուրդները և պետությունը բարձր գնահատեցին հայերի մասնակցությունը Հայրենական Մեծ պատե-րազմին:

106 հայ ռազմիկների Սովետական Միության հերոսի կոչում ընդունեց, պատերազմում աչքի ընկնող մասնակցություն ունեցան 56 հայ զենեարաներ, 60 հազար հայ ռազմիկներ արժանացան Սովետական Միության բարձր շքանշանների, 365 հազար հայ աշխատավորներ պարգևատրվեցին թիկունքում ցուցաբերած աշխատանքային հերոսության համար:

Վրացական ՍՍՌ ԳԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից Ռ. Շմերլինգը գեկուցեց 9-10-րդ դարերի վրացական մի քանի պատկերազարդ ձեռագրերի մասին:

Ձեռագրերի տեքստերին ուղեկցող մանրանկարները ռազմագան են: Ավելի վաղ չքանի ձեռագրերում հանդիպում են և դեկորատիվ զարդեր, սակայն ավելի պարզ և փոքրածիվ: Դեկորատիվ ձևերը, մասնավորապես կամարիկավոր շրջանակներն իրենց ակունքներով հասնում են մինչև ուշ հելենիստական շրջանը:

Մի քանի ձեռագրեր, որոնք պարունակում են այսպես կոչված կամարավոր կանոններ, ծագում են 4-րդ դարի կեսարական ձեռագրերից:

Ձեռագրերը աստիճանաբար ավելի ու ավելի առաաորեն են պատկերազարդվում և տեղական արվեստի կոլորիտը ավելի ուժեղանում է:

Հաղավային Վրաստանի շրջաններից ծագող մի շարք ձեռագրերում նկատվում է վրացի և հայ զավանակից նկարիչների համերաշխ աշխատանքը ձեռագրերը արտագրելու և նկարադրելու գործում:

Ավագ գիտական աշխատակից Ա. Ռոբակի-ձեն գեկուցեց ձկան կուլտի մասին: Թրիալեթում (Դմանիսի շրջան) փաստեր են նկատվում, երբևէ ձուկը օգտագործվում է իբրև շքեր կանանց բեղմնավորության կուլաային միջոց: Ձկան կուլաի այս ֆունկցիան մոզական բնույթ է կրում և գալիս է հնագույն ժամանակներից:

Ձկան կուլտը որպես պտղաբերության կուլտ, հայանի է նաև Հայաստանում և ընդհանուր կովկասյան ակունքներ ունի, իսկ նրա դուզահեղ կարելի է գտնել Միջագետքում:

Ելույթ ունեցող է, Մացուլիվիչը, Բ. Գրոարովսկին և Գ. Հափանցյանը նշեցին ձկան կուլաի, որպես բեղմնավորման, անասնապահության, հողագործության, ջրի, բերրիու-

թյան հետ կապված կուլտի տարածված լինելը Առաջավոր Ասիայում և Անդրկովկասում ուսած հնագույն ժամանակներից: Հարցի համառոտ քննարկումը խոշոր ընդհանրացումների հնարավորություն է ընձեռում:

Ավագ գիտական աշխատակից Գ. Մելիքի-շվիլին զեկուցում կարգաց Մուսասիրը և ուրարտուն: Թեմայով Ուրարտական գլխավոր առավածություն կուլտի կենտրոնը Մուսասիրն էր: Այդ կարող էր լինել այն ժամանակ, երբ Մուսասիրի բնակչությունը ուրարտական պետության մյուս մասերի բնակչության հետ մի ամբողջություն էր կազմում: Ավելի ուշ ուրարտական գրավոր հիշատակարանների ժամանակ նման միասնություն չի նկատվում: Ուրարտական Պանթեոնին տնհայտ՝ իրանական ցեղերից մեկի Բաղմաշտու (Բազրարաու) աստվածուհին մանում է Մուսասիրի պանթեոնը Խալդի աստծու կնոջ դերով:

Այդ հնարավոր կլինե՞ր խուրրի — ուրարտական և իրանական էթնիկ էլեմենտների Մուսասիրում տեղի ունեցած համաձայնման հետեանքով:

Վերջին շրջանում Մուսասիրում նկատվում է Ասորեստանի կուլտուրայի և լեզվի լայն տարածումը, որը թերեւս հետևանք էր սեմա-ասորեստանյան և խուրրու-ուրարտական էթնիկ էլեմենտների միաձուլման:

Ուշ շրջանում Մուսասիրի՝ Ուրարտույից առանձնացած լինելը նկատվում է թե՛ քաղաքական իմաստով և թե՛ լեզվի մեջ: Կուլտային: քաղաքական և կուլտուրական նման հանգամանքները իրավունք են առնում ենթադրելու, թե Մուսասիրը ավելի վաղ շրջանում ուրարտական ցեղերի նշանակալից օջախ է եղել և դարձել է ուրարտացիների կուլտի կենտրոնը, որպիսի կենտրոնի նշանակությունը պահպանել է և ուշ ժամանակներում, երբ Մուսասիրը որոշ չափով առանձնացած էր Ուրարտույից:

Ելույթ ունեցող Բ. Պիոտրովսկին և Գ. Ղափանցյանը նշեցին զեկուցողի, որպես թրատասարդ ուրարտագետի հաջողությունը: Բ. Պիոտրովսկին կասկածանքի է ենթարկում Մուսասիրի և Ուրարտույի, սկզբում միասնական և հետագայում անջատ լինելը, նրա կարծիքով պատկերը հակառակն է եղել:

Մայիսի 29-ին երեկոյան տեղի ունեցավ միացյալ սեսիայի վերջին սյուենար նիստը: Վրացական ՍՍՌ ԳԱ վիցե-պրեզիդենտ և հասարակական գիտությունների Բաժանմունքի նախագահ Ա. Շանիձեն զեկուցում կարգաց Սկրիվների (շարքերի) անսությունը և նրա կիրառումը պարբերի խոնարհման նկատմամբ թեմայով:

Ձեռք և ֆունկցիայի հակասությունը սովորական երևույթ է տարբեր լեզուների նորմատիվ քերականության մեջ: Ջեկուցողը վրացերեն լեզվի ուսումնասիրության հիման վրա առաջարկում է նոր անսություն, սկրիվների անսությունը, որն ունիվերսալ բնույթ ունի և կոչված է լուծել քերականական ձևի ու ֆունկցիայի միջև եղած հակասությունը:

Շարքերի անսությունը կոչված է փոխարինելու խոնարհման և գերիվառի տրադիցիոն ձևերին: Ջեկուցողը փորձեց այդ նոր անսությունը կիրառել նաև դրաբարի խոնարհման նկատմամբ: Գրաբարի խոնարհման բարդ ձևերի փոխարեն զեկուցողը առաջարկում է ձևով և ֆունկցիայով իրարից տարբեր 7 շարք, որոնք արտահայտում են բառերի խոնարհմամբ ստացվող բազմազան իմաստները: Սկրիվների անսությունն անհրաժեշտ է դարձնում գրաբարի քերականական տերմինոլոգիայի վերականգնումը:

Ելույթ ունեցող Ա. Ղարիբյանը նշեց, որ զեկուցումը ընդհանուր լեզվաբանական նշանակություն ունի: Ժամանակն արտահայտող ձևերի և նրանց արտահայտած ժամանակի միջև իմաստաբանական հակասությունների կան, սկրիվների անսությունը ձգտում է լուծել այդ հակասությունները:

Բ. Լափանցյանը իր ելույթում նշեց, որ սկրիվների անսությունը հեռագա մշակման կարիք ունի և այդ մշակումը պետք է կատարվի տարբեր սիստեմի լեզվական մատերիով: Ի հիման վրա:

Ա. Շանիձեի զեկուցմամբ սեսիան ավարտեց իր աշխատանքները:

Վրացական ՍՍՌ և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների Բաժանմունքների միացյալ գիտական սեսիան Երկու ռեսպուբլիկաների գիտական կոլեկտիվների համագործակցության մի փայլուն օրինակ հանդիսացավ: Սեսիան ցույց ավեց կովկասագիտության դարդ սցումն ու բարձր մակարդակը երկու եղբայրակից սովետական ռեսպուբլիկաներում, գիտական կադրերի աննախընթաց անը և երկու Ակադեմիաների հասարակական գիտությունների Բաժանմունքներում մշակվող հարցերի քննարկման և լուծման մարքս-լենինյան սկզբունքային միասնությունը: Սեսիան խոշոր գեր խաղաց Հայաստանի և Վրաստանի գիտնականների համագործակցությունը ամրապնդելու գործում: Նա ազդակ հանդիսացավ այդ համագործակցության հետագա բողարձակման և ծավալման և բազմաթիվ հարցեր առաջադրելու ու միահամուռ ուժերով լուծելու համար: